ԴԻՄԵԴՐՈԼ
ներարկման 1% լուծույթ
ԴԵՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ
(տեղեկատվություն սպառողի համար)

Առևտրային անվանումը
ԴԻՄԵԴՐՈԼ:

Միջազգային չպատենտավորված անվանումը (ՄՉԱ)
Diphenhydramine hydrochloride:

Հոմանիշները
Benzhydramine hydrochloride:

Հիմնական ֆիզիկաքիմիական հատկությունները
Թափանցիկ, անգույն հեղուկ:

Որակական ու քանակական բաղադրությունը
ներարկման լուծույթի 1 մլ-ը պարունակում է.
Ակտիվ նյութեր՝ դիֆենհիդրամին 0.01 գ:
Օժանդակ նյութեր՝ ջուր ներարկման համար մինչև 1 մլ:

Թողարկման ձևը
1 % ներարկման լուծույթ՝ 1 մլ ամպուլներում:

Դեղաբանական խումբը
Հակահիստամինային դեղեր:

ԱԲՔ ծածկագիր՝ R06A A02:

Դեղաբանական ազդեցությունը
H_1-հիստամինային ընկալիչների պաշարիչ է: Ունի հակամուսկարինային, անդորրաբեր, ալերգամարիչ, կծկանքալույծ, տեղային անզգայացնող ազդեցություն: Նվազեցնում կամ կասեցնում է ալերգային վիճակների ժամանակ հարթ մկանունքի հիստամինահարույց կծկանքները, մազանոթների թափանցելիության բարձրացումը, հյուսվածքների այտուցը, քորը և կարմրամաշկությունը: Ունի խոլինալուծարիչ, չափավոր հանգուցապաշարիչ, քնաբեր, չափավոր փսխամարիչ ազդեցություններ:

Դեղակինետիկան
Արագ ներծծվում է ստամոքսաղիքային համակարգից: Լայնորեն տեղաբաշխվում է օրգաններով ու հյուսվածքներով: Թափանցում է արյունուղեղային պատնեշով, ընկերքով և հայտնաբերվում կրծքի կաթի մեջ: Սպիտակուցների հետ կապվում է 98-99%-ով: Մեծ մասը կենսաձևափոխվում է լյարդում, փոքր մասն անփոփոխ ձևով արտազատվում է մեզով: Կիսադուրսբերման փուլը 2,4-9,3 ժամ է:

Ցուցումները
Ալերգային հիվանդություններ, կինետոզ (շարժման հիվանդություն), անքնության կարճատև բուժում, տարեցների պարկինսոնիզմի ախտանշային բուժում կամ որոշ դեղերից հարուցված արտաբրգային խանգարումների բուժում:

Կիրառման ձևերն ու դեղաչափերը
Ներարկման լուծույթը կիրառվում է մ/մ, ն/ե ուղիներով:
Մեծահասակների սովորական դեղաչափն է օրը 3-4 անգամ 10-50 մգ մ/մ կամ ն/ե դանդաղ ներարկումը: Անհրաժեշտության դեպքում դեղաչափը կարելի է մեծացնել մինչև 100 մգ: Առավելագույն օրական դեղաչափն է 400 մգ-ը: Երեխաներին՝ օրը 3-4 անգամ մ/մ կամ ն/ե 6.25-25 մգ, 5 մգ/կգ /օրը կամ 150 մգ/մ²/օրը՝ բաժանված 4 ընդունումների համար: Առավելագույն օրական դեղաչափը 300 մգ-ից ոչ ավել է:

Հակացուցումները
Դեղի հանդեպ բարձրազգայնություն, նորածիններ, այդ թվում՝ անհասներ, կրծքով կերակրման ժամանակահատված:

online-apteka.am

Կողմնակի ազդեցությունները

Հիմնականում՝ ցան, անաֆիլաքսային շոկ, լուսազգայնություն, խթանված քրտնարտադրություն, բերանում, քթընպանում՝ չորություն:

Միզուղանոթային համակարգի՝ թերճնշում, գլխացավ, սրտխփոց, արագասրտություն, էքստրասիստոլիա:

Արյան համակարգի ռեակցիաներ՝ արյունալուծարիչ սակավարյունություն, թրոմբոցիտոպենիա, ագրանուլոցիտոզ:

ԿՆՀ-ի՝ քնկոտություն, շարժումների կոորդինացիայի խանգարում, գրգռվածություն, նյարդայնություն, էյֆորիա, դող, անքնություն, տարազգայնություն, տեսողության խանգարումներ, կրկնատեսություն, ականջներում աղմուկ, ներքին ականջի սուր բորբոքում (լաբիրինտիտ), նյարդաբորբ, ցնցումներ:

Ստամոքսաղիքային համակարգի՝ ախորժակի բացակայություն, վերստամոքսաղիքային դիստրես, սրտխառնոց, փսխում, փորլուծություն, փորկապություն:

Միզասեռական համակարգի՝ հաճախացած և/կամ դժվարացած միզարձակում, վաղ դաշտան:

Շնչական համակարգի՝ բրոնխային ներզատուկի խտացում, կրծքավանդակում՝ ճնշման զգացում, քթի լցվածություն:

Դեղային փոխազդեցությունները

ՄԱՕ-ի արգելակիչները երկարացնում և ուժեղացնում են հակահիստամինային դեղերի հակախոլինաբնույթ ազդեցությունները:

Ալկոհոլի, քնաբերների և անդորրաբերների հետ միաժամանակ կիրառումը խթանում է ԿՆՀ-ի ընկճումը:

Հատուկ հրահանգներ

Զգուշությամբ է կիրառվում հղիության, գլաուկոմայի, շագանակագեղձի գերաճի, ՍԱՀ-ի և միզուղիների ստենոզացնող հիվանդությունների, գերվահանագեղձության, սիրտանոթային համակարգի հիվանդությունների, բրոնխային ասթմայի ժամանակ և տարեցների կողմից:

Հարմարսողական ներմուծման դեղաձևը չպետք է ներարկել միջ- և ենթամաշկային ուղիով՝ ելնելով մաշկի տեղային գրգռվածության՝ ընդհուպ մինչև մեռուկի վտանգից: Բուժման փուլում պետք է խուսափել լարված ուշադրություն և արագ հոգեշարժական ռեակցիա պահանջող գործունեությունից:

Գերդեղաչափումը

Ախտանիշներն են՝ բերանում չորությունը, դժվարացած շնչառությունը, կայուն բբալայնացումը, ԿՆՀ-ի ընկճումը կամ խթանումը (հաճախ՝ երեխաների շրջանում), գիտակցության խառնաշփոթը, ցնցումները, հնարավոր է մահացու ելքը:

Բուժումն ախտանշային է՝ շնչառության և ՋԵ-ի վերահսկման պայմաններում:

Փաթեթավորումը

Միջնորմով ստվարաթղթե տուփի մեջ՝ 1 մլ 1%-ոց ներարկման լուծույթի 10-ական ամպուլ:

Դեղատնից բացթողման կարգը

Դեղատոմսով:

Պահման պայմանները

Չոր, լույսից պաշտպանված տեղում, սենյակային ջերմաստիճանի պայմաններում, երեխաներին անհասանելի տեղում:

Պիտանիության ժամկետը

5 տարի:

Արտադրող՝

«Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲԸ,
Հայաստան, 0040, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք, թիվ 6:
Հեռ./ֆաքս. + (374 10) 62 74 10, հեռ.՝ 61 87 29:

online-apteka.am